DOI: 10.57192/18291864–2022.4–60

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1920–1922 ԹԹ. «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ կազմավորման 100–ամյակի առթիվ*

Բանալի բառեր – Խորհրդային Հայաստան, 1920 թ., ԽՍՀՄ, Ալ. Մյասնիկյան, պետականություն, անկախություն, Ի. Ստալին, Կովբյուրո, պատմագրություն, հանրապետություն, սահմանադրություն, Ժողկոմխորհ, կուսակցություն, գնահատական, ինքնիշխանություն:

Մուտք

2022 թ. դեկտեմբերի 30–ին լրանում է ԽՍՀՄ կազմավորման 100–ամյակը, որն այդ իրադարձությանը մինչ օրս տրված տարբեր և հաճախ իրարամերժ գնահատականների ու արժևորումների ամփոփման պահն է: Այս համատեքստում կարևոր է հանգուցալուծել մեզանում շարունակվող բանավեճը Հայաստանի անկախության կորստյան ժամկետների շուրջ: Խորհրդային և անգամ հետխորհրդային հայ պատմագրության մեջ պահպանվում է այն համոզումը, որ Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո՝ մինչև 1922 թ. դեկտեմբերի 30–ին ԽՍՀՄ կազմի մեջ մտնելը, Հայաստանն անկախ երկիր է եղել: Դրա համար որպես հիմնավորում բերվում է առաջին հերթին 1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի հայ–ռուսական (Դրո–Լեգրան) 8–կետանոց համաձայնագիրը, որի հենց 1–ին կետում արձանագրված է՝ «**Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Հանրապետություն**»[1]: Բայց մինչ օրս հայաստանյան և սփյուռքյան հեղինակների մի մեծ խումբ խոր համոզումով պնդում

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.11.2022:

1 «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ղեկ.՝ **Վլ. Ղազախեցյան**, Եր., 2000, էջ 383:

է, որ 1920 թվականին իր անկումով ու խորհրդայնացումով մեր երկիրը կորցրեց անկախությունը (քաղաքական, իրավական, տնտեսական, ռազմական և այլն) և դարձավ Խորհրդային Ռուսաստանի բաղկացուցիչ մասը:

Մի խումբ պատմաբաններ էլ, այդ թվում՝ հետխորհրդային, կարծում են, որ իրավական տեսանկյունից 1920–1922 թթ. ՀՍԽՀ-ի ընդունած մի շարք փաստաթղթերի, միջազգային պայմանագրային հարաբերությունների և պետականության այլ խորհրդանիշների առկայությունը հիմք է տալիս պնդելու, որ ՀՍԽՀ-ն ինքնիշխան պետություն էր՝ միաժամանակ նշելով, որ այդ անկախությունը ձևական էր, իսկ 1922 թ. Անդրֆեդերացիայի հիմնումից ու հատկապես ԽՍՀՄ կազմավորումից հետո բովանդակային առումով նույնպես ՀՍԽՀ-ն դադարեց անկախ լինելուց, թեև պահպանեց պետականությունը:

Եվ վերջապես, գոյություն ունի մեկ այլ տեսակետ պաշտպանողների ստվար խումբ, որի մեջ մտնում են հիմնականում խորհրդային ու նաև հետխորհրդային շրջանի առանձին հեղինակներ, որոնք շարունակում են պնդել, թե իբր Հայաստանն իսկական անկախություն ձեռք բերեց հենց խորհրդայնացման շնորհիվ 1920 թ. նոյեմբերի 29-ին:

Հեղինակների այն խումբը, որը ոչ ավել, ոչ պակաս կարծում է, թե Հայաստանն իսկական անկախություն ձեռք բերեց խորհրդայնացումից հետո, հենվում է ոչ միայն 1920 թ. Դրո-Լեգրան համաձայնագրի 1-ին կետի, այլև Անդրկովկասի կուսակցական-պետական գործիչներ Գ. (Ս.) Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և մյուսների զեկուցումների ու ելույթների վրա: Այսպես՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ **Ալ. Մյասնիկյանը** (1886–1925) 1922 թ. հունվարի 30-ին կառավարության տարեկան հաշվետվության մեջ շեշտում էր, որ «Հայաստանին տվինք իսկական անկախություն»[2]: Մյուս կողմից, ըստ նրա հաշվետվության, «Անկախութիւնը նպատակ չէ աշխատավորութեան համար, այլ միջոց, իսկ նպատակը բարեկեցիկ կեանք և լուսավոր ապագան է»[3]: Ստացվում է, որ ազգի ու ժողովրդի համար գլխավորը ոչ թե երկրի անկախությունն է, այլ խոստացված բարեկեցիկ կյանքը և լուսավոր ապագան: Լուսավոր ապագա ասելով նկատի էր

2 «ՀՍԽՀ պատգամավորական խորհուրդների 1-ին համագումարի արձանագրութիւնը», Յեր., 1922, էջ 20:
3 Նույն տեղում:

առնվում **կոմունիզմի** կառուցումը: Իսկ այդ զեկուցումից երկու օր առաջ՝ 1922 թ. հունվարի 28-ին, ՀԿ(բ)Կ 1-ին համագումարում Մյասնիկյանը, խոսելով Հայաստանի անկախության մասին, ակնարկում էր, որ իրենք անկախությունը չեն հասկանում այն իմաստով, ինչ դաշնակցականները, մուսավաթականները կամ մենշևիկները. «Մեզ անկախությունը հարկավոր է Արևելքը հեղափոխականացնելու համար, ցույց տալով, որ խորհրդայնացման հետևանքով մենք չենք կորցնում անկախությունը»[4]:

Հայ կոմունիստ ղեկավարների նկարագիրը տալու համար կարելի է վկայաբերել 1922 թ. նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին կայացած Համահայաստանյան բանվորա-գյուղացիական խորհուրդների 2-րդ համագումարում հողժողկոմ Ա. Երզնկյանի ելույթը, որը հայտարարում էր, թե կոմկուսի համար սահմանները նշանակություն չունեն, կարևորն այն է, որ սահմաններ չլինեն, իսկ լինելու դեպքում դրանք որոշողը կլինի «**համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը**»[5]:

Հայ կոմունիստ ղեկավարների ապազգայնությունը երևում է, երբ համեմատում ենք Հայաստանի և Վրաստանի կոմունիստ առաջնորդների դիրքորոշումները: Այսպես՝ Վրաց. ՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարում՝ 1922 թ. մարտի 2-ին հաստատված Սահմանադրության 2-րդ գլխի 5-րդ հոդվածում ամրագրված էր՝ «**ՎՍԽՀ-ն ինքնիշխան պետություն է**», իսկ 6-րդ հոդվածում՝ «**ՎՍԽՀ պետական լեզուն վրացերենն է**»[6], մինչդեռ նմանատիպ հոդվածներ դրանից մեկ ամիս առաջ՝ 1922 թ. փետրվարի 3-ին, ՀՍԽՀ բանվորա-գյուղացիական պատգամավորական խորհուրդների 1-ին համագումարում ընդունված Սահմանադրության մեջ չկան[7]: Ուստի պատահական չպետք է համարել, որ 1921 թ. Փետրվարյան ապստամբության

---

4 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 22:

5 «ՀՍԽՀ պատգամավորական խորհուրդների 2-րդ համագումարի արձանագրութիւնը», Յեր., 1923, էջ 99:

6 «Конституция Социалистической советской республики Грузии (принята 1 съездом Советов ССР Грузии 1922 г.)», Тб., 1922, с. 340, «История Советской конституции в декретах и постановлениях советского правительства 1917-1936», составил **С. Студенкин**, М., 1936, с. 205, «Образование СССР (сборник документов)», М., 1972, с. 238.

7 Տե՛ս «ՀՍԽՀ Սահմանադրութիւնը (Հիմնական որենք)», Յեր., Պետական հրատ., 1922, էջ 1-16, **Խաչատրյան Հ.**, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Եր., 1997, էջ 33: Նշենք, որ Հայհեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 9-ին «Պետական լեզվի մասին» օրենք էր ընդունել, որով Հայաստանի սահմաններում պետական լեզու էր ճանաչվում հայերենը (տե՛ս «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջմիածին, Պետ. հրատ., 1921, էջ 7): Սակայն դա տեղ չէր գտել ՀՍԽՀ Սահմանադրության մեջ:

օրերին հաշտարար առաքելությամբ Թիֆլիսից Երևան ժամանած Հովի. Թումանյանն իր մի անտիպ հոդվածում, թվարկելով ապստամբության պատճառները, մատնանշում էր «Հայի լեզվի վտարումը Հայաստանի խորհրդային հիմնարկություններից»[8] և այլն:

Խորհրդային Հայաստանի պետական իշխանության շրջանում և հասարակության առանձին շերտերում ժամանակին տիրապետող կարծրատիպերից էր խորհրդահայ պատմաբան Հ. Էլչիբեկյանի մենագրության մեջ տեղ գտած այն տեսադրույթը, թե իբր «Հոկտեմբերյան հեղափոխությունը փրկեց հայ ժողովրդին իրեն սպառնացող կործանումից: Խորհրդային իշխանության հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը ստեղծեց իր պետականությունը, ձեռք բերեց **իսկական ազատություն և անկախություն** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[9]: Նախ՝ «Մեծ հոկտեմբերը» ոչ թե հայ ժողովրդին փրկեց կործանումից, այլ նրան քաղաքական, տարածքային և այլ մեծ կորուստներ ու վնասներ պատճառեց: Իրականում այն ծառայեց Քառյակ միության ու հատկապես Օսմանյան Թուրքիայի շահերին: Ինչ վերաբերում է այն դատողությանը, թե խորհրդային իշխանության հաղթանակով հայ ժողովուրդը ստեղծեց իր պետականությունը, ապա մինչ այդ Հայաստանը ունեցել է իր անկախ պետականությունը՝ Առաջին հանրապետությունը, որի անկման գործում գլխավոր դերակատարներից էր հենց «Մեծ հոկտեմբերի» ծնունդ Խորհրդային Ռուսաստանը:

Կարելի է ընդունել, որ Խորհրդային Հայաստանն իր գոյության 70 տարիների ընթացքում, իրոք, համեմատաբար անվտանգ ու բարվոք կյանք է ունեցել, սակայն մի բան է սեփական ազգային անկախ պետականություն ունենալը, որն անպայման չի ենթադրում երկրի ու ժողովրդի բարեկեցիկ կյանք, և բոլորովին այլ բան է ընդամենը բարեկեցիկ կյանքով ապրելը: Կարելի է ապրել որևէ հզոր տերության հովանու ներքո՝ չունենալով սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու հնարավորություն, ապրել նյութապես ապահով ու անհոգ կյանքով: Սրանք միանգամայն տարբեր երևույթներ են:

Հանրահայտ ճշմարտություն է, որ անկախությունը և ազատությունը յուրաքանչյուր ազգի համար գերակա (բացարձակ) արժեքներ են, նրա միջազգային ճանաչելիության ու գնահատման չափանիշ:

---

8 **Թումանյան Հ.**, Իմ Երևան գալու առիթով, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 7, Եր., 1995, էջ 514:

9 **Эльчибекян А. М.**, От ревкомов к советам (создание советов в Армении), Ер., 1978, с. 11.

Բայց անկախ չի կարող լինել այն ազգ-ժողովուրդը, որը հոգով անկախ չէ[10]:

Եվ վերջապես, եթե Հայկ. ԽՍՀ-ն անցած 70 տարիներին իսկապես եղել է ազատ ու անկախ պետություն, ապա էլ ի՞նչ կարիք կար 1991 թ. սեպտեմբերի 21-ին անկախության համաժողովրդական հանրաքվե անցկացնելու և հռչակելու Հայաստանի անկախությունը: Ակներև է, որ վերոհիշյալ տեսակետը պաշտպանողները չունեն իրավական առումով քիչ թե շատ փաստարկված հիմքեր, այլ, հիշեցնելով խորհրդային շրջանում ժողովրդի սոցիալապես քիչ թե շատ բարվոք կյանքը, հետապնդում են հստակ քաղաքական նպատակ՝ կրկին վերադառնալ Ռուսաստանի (ներկայումս՝ ՌԴ) հովանու ներքո, որի բարձր ղեկավարության՝ նախկին ԽՍՀՄ-ը նորացված **միության** տեսքով վերականգնելու ձգտումը հանգեցրել է պատերազմական գործողությունների:

1. «Պետականություն», «պետություն» և «անկախություն» հասկացությունները

Հայաստանի անկախության իրավական գնահատականը տալուց առաջ նախ փորձենք «**պետականություն**» և «**պետություն**» հասկացությունները դիտարկել լեզվաբանության տեսանկյունից: Ըստ ակադեմիկոս Էդ. Աղայանի բացատրական բառարանի՝ «պետականություն»-ը նշանակում է «պետական կառուցվածք՝ կարգ, պետության կազմակերպական սիստեմ»: Նույն բառարանում, սակայն, «պետություն» հասկացության համար բերված է «Կոմունիստական մանիֆեստի» մարքսյան դասակարգային բացատրությունը. այն իբր մի դասակարգի բռնության գործիքն է՝ ճնշելու մյուսներին: Էդ. Աղայանի տված մեկ այլ բացատրությամբ՝ պետությունը «պետական կառավարման մարմինների ամբողջություն» է[11]:

Դժվար չէ նկատել, որ հիշյալ բացատրությունները հնացած են ու միակողմանի և չեն համապատասխանում «պետություն» և «պետականություն» հասկացությունների արդի ըմբռնմանը: Օքսֆորդի

10 Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, Մտորումներ անկախության մասին, «Երկիր», Եր., 3 մայիս-6 հունիս 2002 թ., էջ 12, **նույնի՝** Մայիսի 28-ի խորհուրդը, «Երկիր», Եր., 26 մայիսի 2006 թ., էջ 3:

11 Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1976, էջ 1212-1213:

համալսարանի կազմած քաղաքագիտական բառարանում տրված է միայն «պետություն» եզրը, որը սահմանվում է հետևյալ կերպ. «Քաղաքական այնպիսի կառույցների որոշակի համակարգ, որոնց նպատակը որոշակի սահմաններով տարածքի ներսում իշխանության կազմակերպումն է հանուն ընդհանուր շահերի»[12]: Սա, իհարկե, արևմտյան արժեհամակարգին բնորոշ սահմանում է, որտեղ պետական իշխանությունը դիտվում է որպես ընդհանուր շահերի ապահովման և ոչ թե այս կամ այն իշխող դասակարգի նպատակների իրականացման միջոց, ինչպես բնորոշվում էր մարքս-լենինյան ուսմունքում:

«Պետականություն» և «պետություն» հասկացությունների փոխհարաբերակցության խնդրին անդրադարձել է նաև խորհրդահայ ճանաչված իրավաբան-պետականագետ Աղասի Եսայանը: Ըստ նրա՝ «պետականություն» և «պետություն» հասկացությունները իրարից տարբերվում են հետևյալով. պետականությունը կայուն է, մշտահաստատ, իսկ պետությունը՝ իբրև բռնության, ճնշման գործիք, փոխվում է ըստ սոցիալ-քաղաքական իշխանության ձևի: Օրինակ՝ սոցիալիստական հեղափոխության ժամանակ փոխվում է պետության սոցիալ-դասակարգային բնույթը, իսկ պետականությունը՝ որպես հասարակական-քաղաքական կայուն կազմակերպություն, պահպանվում է[13]:

Եթե վերը բերված տեսադրույթը կոնկրետացնենք 1920 թ. Հայաստանի առումով, ապա, ըստ Ա. Եսայանի, կստացվի, որ Հայաստանի առաջին հանրապետության անկման և խորհրդայնացման փուլում գոյություն ունեին և՛ պետականություն, և՛ պետություն քաղաքական համակարգերը: Առաջին հանրապետության խաղաղ իշխանափոխությունից հետո պահպանվեց ու փոխանցվեց պետականությունը՝ որպես հասարակական-քաղաքական կայուն համակարգ, սակայն փոխվեց պետության սոցիալ-քաղաքական բնույթը. հանձին Հայհեղկոմի՝ խորհրդարանական, ժողովրդավարական կառավարմանը փոխարինելու եկավ իշխանության նոր ձև՝ իբրև **պրոլետարիատի դիկտատուրա**: Առաջին հայացքից բանվորների և աշխա-

12 «Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան», Եր., 2003, էջ 505:

13 Տե՛ս **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922 թթ., Եր., 1967, էջ 228:

տավոր գյուղացիության անունից հանդես եկող այդ դիկտատուրան ի սկզբանե իր էությամբ ու գործելակերպով դարձավ բռնաձնշիչ, ջարդարար, ռեպրեսիվ մի մեքենա:

Հանձին Հայաստանի առաջին հանրապետության՝ 1918 թ. մայիսի 28-ին՝ դարավոր ընդմիջումից հետո, գերմարդկային ճիգերով ու կորուստներով սկիզբ դրվեց հայոց և՛ պետականությանը, և՛ պետությանը՝ իր քաղաքական համակարգով և իշխանության ժողովրդավարական (խորհրդարանական) կառավարման ձևով: Ժամանակի սղության պատճառով Առաջին հանրապետությունում հնարավոր չեղավ ընդունել սահմանադրություն: Բանն այն է, որ, այլևայլ խնդիրներից զատ, ՀՀ քաղաքական ղեկավարությունը ջանքեր էր գործադրում Հայկական հարցի վերջնական լուծման, այն է՝ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի կենսագործման համար: Բայց, այդ ամենով հանդերձ, ՀՀ-ն օժտված էր իր ժամանակին հատուկ լիիշխանությամբ ու անկախությամբ: Թեև պետք է նաև ընդունել, որ պետության բացարձակ անկախություն չի լինում: Ուստի երբ արտաքին ուժերի բռնի միջամտությամբ անկում ապրեց Հայաստանի Հանրապետությունը, և երկիրը խաղաղ խորհրդայնացվեց, Հայաստանում պահպանվեցին ու փոխանցվեցին պետականության գաղափարն ու ինստիտուտը: Սակայն կատարվեց պետական իշխանության, վարչակազմի ու վարչակարգի փոփոխություն. խորհրդարանական ժողովրդավարական կառավարման ձևին փոխարինելու եկավ իշխանության նոր ձև՝ այսպես կոչված պրոլետարիատի դիկտատուրան, որն իրականացվում էր Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի (**Հայհեղկոմի**) միջոցով: Հարկ է նկատել, որ **հեղկոմները**, ինչպես նաև **խորհուրդները** (**սովետները**)՝ որպես պետական իշխանություն և կառավարման մարմին, **ռուսական երևույթներ** էին և բնավ կապ չեն ունեցել հայ իրականության հետ[14]:

Սովորաբար սուվերենություն (ինքնիշխանություն) ասելով պետք է հասկանալ նաև պետության՝ պետական ինքնուրույնությամբ օժտվածություն թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում:

---

14 Հայաստանի ՌՀԿ-ն ձևավորվել էր Բաքվում ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի (քարտուղար Գ. Օրջոնիկիձեի) հրահանգով, որի միջուկը կազմում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամները: Կառավարություն դարձած ՀՌՀԿ ժողկոմիսարները միաժամանակ զբաղեցնում էին Հայկոմկուսի Կենտկոմի անդամի կամ թեկնածուի պաշտոնները, իսկ ԿԿ տեխնիկական քարտուղարի պարտականությունները կատարում էր Գ. Ալիխանյանը: Այդ պաշտոնն այն ժամանակ դեռ մեծ կշիռ չուներ:

Մնում է պարզաբանել, թե պրոլետարիատի դիկտատուրայի տեսքով հանդես եկած այդ նոր պետությունը՝ ՀՍԽՀ-ն, ինչպիսի լիիշխանությամբ կամ անկախությամբ էր օժտված: Մեր կարծիքով՝ խնդրահարույց է ՀՍԽՀ-ն դասել ինքնիշխան պետությունների շարքը, քանզի **պետականության** ու **պետության** քաղաքական համակարգերի գոյությունը դեռևս չի ենթադրում տվյալ պետական միավորի **անկախություն**:

Խորհրդային իրավագետ Ա. Բեգյանը, մեղանչելով պատմական ճշմարտության առաջ, հայտարարում էր, որ խորհրդայնացումով և 1922 թ. փետրվարի 4-ին Սահմանադրության (Հիմնական օրենքի) ընդունումով ՀՍԽՀ-ն «ձեռք բերեց անկախություն», «դարձավ սուվերեն (ինքնիշխան) պետություն»[15]: Մինչդեռ Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրության մեջ ակնարկ անգամ չկա Հայաստանի ինքնիշխանության (սուվերենության), առավել ևս անկախության մասին[16]: Դրան հակառակ՝ Ա. Բեգյանը ձևական էր համարում «դաշնակների հանրապետությունը» և գտնում, որ խորհրդայնացումից հետո տեղի ունեցավ Հայաստանի պետականության զարգացում[17]:

Հարկ է փաստել, որ ՀՍԽՀ 1-ին Սահմանադրության հիմքում դրվել էին ՌՍԴԽՀ խորհուրդների 5-րդ համագումարում 1918 թ. հուլիսի 10-ին ընդունված Խորհրդային Ռուսաստանի Սահմանադրության հիմնական սկզբունքներն ու դրույթները՝ դասակարգային աշխարհայեցողության, կոմունիստական գաղափարախոսության, հողի, ընդերքի, անտառների, բանկերի, երկաթուղիների, նավատորմի պետական-համաժողովրդական սեփականության, միակուսակցական կառավարման համակարգի, դասակարգային **խտրականության** և այլ հիմնադրույթների ու սկզբունքների արձանագրմամբ[18]:

---

15 **Бегиян А. З.**, Развитие советской государственности в Армении, Ер., 1968, с. 27, 197.

16 Տե՛ս «ՀՍԽՀ Սահմանադրութիւնը (Հիմնական որենք)», էջ 1-16: Ինչ վերաբերում է ՀՍԽՀ 1-ին Սահմանադրությանը, ապա այն ընդունվել է **փետրվարի 3-ին** բանվորա-գյուղացիական և կարմիրբանակայինների պատգամավորների համահայաստանյան խորհուրդների 1-ին համագումարում (տե՛ս **Սահրադյան Ս.**, Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեները Հայաստանում (1917-1922), Եր., Հայպետհրատ, 1961, էջ 181, **Եսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 360, **Պետրոսյան Շ.**, Հայկական ՍՍՀ (պետք է լինի **Հայաստանի ՍԽՀ** – Ա. Հ.) Սահմանադրությունը և նրա զարգացումը, Եր., 1982, էջ 4, **Խաչատրյան Հ.**, նշվ. աշխ., էջ 12 և այլն):

17 Տե՛ս **Бегиян А. З.**, նշվ. աշխ., էջ 27, 197:

18 Պետության գաղափարի սահմանադրական ամրագրման հարցում ուշագրավ է հետևյալ փաստը: Բանն այն է, որ Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակից հետո նորահաստատ խորհրդային իշխանությունը, տարված համաշխարհային հեղափոխության, սոցիալիզմի ու կոմունիզմի մասին կեղծ պատրանքներով, 1918 թ. ամռանն ընդունած Համառուսաստանյան 1-ին սահմանադրության 2-րդ բաժնի 5-րդ գլխի 9-րդ հոդվածում արձանագրել էր այն թեզը, որ, ճնշելով բուրժուազիային, վերացնելով մարդու կողմից մարդու շահագործումը և հաստատելով սոցիա-

Ընդ որում, Սահմանադրության հիմքում դրվել էր Վ. Լենինի գրած և Համառուսաստանյան սահմանադիր ժողովի արձակումից հետո՝ 1918 թ. հունվարին, Համառուսաստանյան խորհուրդների 3-րդ համագումարում հաստատված «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան»[19]: Դրա դրույթները ևս ամրագրվեցին և որոշ փոփոխություններով ու լրացումներով գործադրվեցին ՀՍԽՀ-ում, այնպես որ խոսք չի կարող լինել խորհրդայնացած Հայաստանի իրավաօրենսդրական ինքնուրույնության, էլ չենք ասում՝ անկախության մասին: Իսկ Առաջին հանրապետության պետաիրավական և օրենսդրադատական ամբողջ համակարգն ու նորմերը «բուրժուականի» պիտակավորմամբ, ըստ էության, կազմաքանդվեցին:

ՀՍԽՀ Սահմանադրության ընդունումից հետո նրա ինքնիշխանության կորստի առաջին փուլը **1922 թ. մարտի 12-ին** Վրաստանի և Ադրբեջանի ՍԽՀ-ների հետ Անդրդաշնային Միության (Անդրֆեդերացիայի) կազմում ընդգրկվելը, ապա նույն թվականի **դեկտեմբերի 13-ին** այդ միության՝ մեկ դաշնային հանրապետության (ԱՍԴԽՀ) վերակազմումն էր՝ իր միասնական սահմանադրությամբ, իսկ երկրորդ փուլը՝ **1922 թ. դեկտեմբերի 30-ին** Անդրդաշնային Հանրապետության՝ ԽՍՀՄ կազմում հայտնվելը **կրկնակի** կամ, ինչպես ասում էին միջնադարում, վասալի վասալ կարգավիճակով: Դժվար չէ նկատել, որ տեղի է ունեցել Հայաստանի, նաև մյուս հանրապետությունների ինքնիշխանության իրավական ու փաստական կտրուկ սահմանափակում, որն իրավական ձևակերպում ստացավ 1924 թ. հունվարի 31-ին խորհուրդների 2-րդ համագումարում ընդունված արդեն ԽՍՀՄ 1-ին Սահմանադրության մեջ: Դրանով ՀՍԽՀ-ն դարձավ Դաշնային Միության սուբյեկտ: Հետագայում՝ 1936 թ. դեկտեմբերի 5-ին կայացած ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ համագումարում նոր (ստալինյան կոչվող) սահմանադրության ընդունումով լուծարվեց Անդրդաշնային Հանրապետությունը, և երեք հանրապետությունները ստացան միութենական հանրապետության կարգավիճակ[20], սակայն դա էապես

լիզմ, «չի լինի ո՛չ դասակարգային բաժանում, ո՛չ **պետական իշխանություն** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)» («Конституция Р.С.Ф.С.Р. (Основной закон)», принятая V Всероссийском Съездом Советов, М., Гос. издат., 1920, с. 6): Այլ խոսքով՝ իբրև թե կվերանա «պետությունը»: Հարկ է նշել, որ խորհրդային պետության հետագա սահմանադրություններում այդ սխալն այլևս չկրկնվեց: Ընդհակառակը՝ հետագայում ամեն ջանք գործադրվեց, որպեսզի պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ ամրապնդվի ու հզորանա պետություն կոչված այդ բռնաճնշիչ մեքենան:

19 «История СССР», вторая серия, гл. ред. **Б. Н. Пономарев**, т. 7, М., «Наука», 1967, с. 284-285.

20 Տե՛ս «История Советской Конституции (в документах) 1917-1956», М., Гос. издат., 1957, էջ 730:

չընդլայնեց նրանց իրավասությունների շրջանակները: Անդրկովկասյան երեք միութենական հանրապետությունները մաս կազմեցին ԽՍՀՄ ունիտար և կենտրոնաձիգ, բազմազգ ամբողջատիրական կայսրությանը, և այդ վիճակը պահպանվեց ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը՝ մինչև 1991 թ. դեկտեմբերը[21]:

Խորհրդային սահմանադրագետները միութենական հանրապետությունների ինքնիշխան իրավունքների սահմանափակումը մեկնաբանում ու հիմնավորում էին նրանով, որ, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության, «միութենական հանրապետությունները իրենք են **կամավոր** իրենց իրավունքների մի մասը տվել ԽՍՀՄ-ին՝ իրենց իսկ շահերից ելնելով»[22]: Խիստ կասկածելի ու անտրամաբանական է, որ որևէ ինքնիշխան պետություն իր անկախությունը կամավոր կհանձնի մեկ այլ պետության:

Մինչ ԽՍՀՄ ենթակայության տակ անցնելը ՀՍԽՀ-ն ձևականորեն համարվում էր ինքնիշխան, իբրև թե անկախ պետություն: Այդ կապակցությամբ 1921 թ. ապրիլի 19-ին Երևանի կուսկազմակերպության կոմիտեի և արհեստակցական միությունների խորհրդի միացյալ հանդիսավոր նիստում ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն նշում էր, որ միայն «Սովետական իշխանությունը ապահովեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի իսկական անկախությունը իմպերիալիզմից»[23]: Այնուհետև իր ելույթի վերջում նա հայտարարեց. «Կեցցե՛ անկախ Խորհրդային Հայաստանը»[24]:

Անշուշտ, պետք է ընդունել, որ ՀՍԽՀ-ն ունեցել է պետականությանը բնորոշ բոլոր անկապտելի խորհրդանիշները՝ պետության անվանումը, էթնիկ ընդհանրությունը, սահմանադրությունը, պետական գերբը (զինանշանը), **դրոշը**, օրհներգը, տարածքը, պետական իշխանության կառույցները, առանձին ժամանակահատվածներում ունեցել է անգամ արտաքին գործերի կոմիսարիատ, դիվանագիտական ներկայացուցչություններ ու հյուպատոսություններ և այլն: Սակայն, կարծում ենք, դրանք դեռ բավարար հիմք չեն ՀՍԽՀ-ի՝ **անկախ** պետություն համարվելու համար:

---

21 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայոց պատմություն, Եր., 2022, էջ 339-340:
22 «Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիա», կազմող՝ **Ա. Եսայան** և ուրիշներ, Եր., 1949, էջ 35:
23 «Կոմունիստ», Եր., 23 ապրիլի 1921 թ.:
24 Նույն տեղում:

Ասվածը հիմնավորելու համար բերենք մի փաստ: ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն 1921 թ. դեկտեմբերի 8-ին կայացած իր 84-րդ նիստում, լսելով ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի առաջարկությունը խորհրդային հանրապետությունների՝ պայմանագիր կնքելու կարգի մասին, որոշում է, որ «Խորհրդային միութենական հանրապետությունները, առանց ՌՍՖԽՀ ժողկոմխորհի նախնական համաձայնության, չեն կարող որևէ պայմանագիր կնքել»[25]: Քաղբյուրոյի նույն նիստում լսվել է նաև Խորհրդային Ռուսաստանի և միութենական հանրապետությունների փոխհարաբերությունների հարցը և որոշվել. «Խորհրդային միութենական բոլոր հանրապետությունների արտաքսահմանյան ներկայացուցչությունները ենթարկվում են ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչությանը»[26]: Նիստի արձանագրության քաղվածքները ստորագրել է ՌԿ(բ)Կ ԿԿ քարտուղար Վ. Մոլոտովը: Բերվածը բավական է գնահատելու «արտաքին ճակատում» Հայաստանի անկախության և նրա լիազոր ներկայացուցչությունների իրավասության աստիճանը:

Պետական անկախությունն այն է, երբ տվյալ ազգ-ժողովուրդն ինքն է տնօրինում իր ազգային-պետական ճակատագիրը, ճշտում անկախության ձևը և պետական կառուցվածքը, որոշում երկրի սահմանները, արտաքին և ներքին քաղաքականությունը, տնտեսական հարաբերությունները, սահմանում իրավաօրենսդրական նորմերը, հոգևոր-մշակութային արժեհամակարգը և այլն: Ելնելով վերոնշյալ չափանիշներից՝ կարելի է ասել, որ «անկախ» Խորհրդային Հայաստանը, ըստ էության, չի բավարարել վերը թվարկված և ոչ մի պայման:

Խորհրդահայ իրավաբան Ա. Եսայանի բնորոշմամբ՝ «Սովետական իշխանության հռչակումով (1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայով) Հայաստանը մտավ միջազգային հարաբերությունների ոլորտը որպես միջազգային իրավունքի սոցիալիստական սուբյեկտ, հայ ժողովրդի սուվերեն կամքի արտահայտիչ»[27]: Մեկ այլ տեղ նա նշում է. «Որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, Սովետական Հայաստանը օժտված էր անկախ պետական գերագույն իշխանության բոլոր ատրիբուտներով»[28], և մինչև ԽՍՀՄ կազմավորումը ՀՍԽՀ-ն

25 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 22:
26 Նույն տեղում:
27 **Եսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 230:
28 Նույն տեղում, էջ 255:

խորհրդային մյուս անկախ հանրապետությունների նման եղել է «միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ»[29]: Բերված քաղվածքներից հետևում է, որ մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը հայկական պետություն չի եղել, և միայն խորհրդայնացումից հետո Հայաստանը դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ: Դրանով փաստորեն ժխտվում է ՀՀ միջազգային իրավասուբյեկտության փաստը այն դեպքում, երբ 1920 թ. առաջին կեսին նա միջազգայնորեն «**de-facto**» և «**de-jure**» արդեն ճանաչված էր աշխարհի շուրջ **40** պետությունների կողմից, իսկ 1920 թ. աշնանը պատրաստվում էր անդամագրվելու Ազգերի լիգային[30]:

ՀՍԽՀ-ն, մեր կարծիքով, չի ունեցել ոչ միայն անկախություն, այլև քիչ թե շատ ինքնիշխանություն ո՛չ արտաքին ու ներքին, ո՛չ սոցիալ-տնտեսական, ո՛չ գաղափարաքաղաքական և ո՛չ էլ պետական շինարարության ոլորտներում: ՀՍԽՀ-ն գործնականում գրեթե ամեն ինչում կախված ու ենթակա էր Մոսկվային՝ վերջինիս պարտադրանքով: Հայաստանում կիրառվել է այն նույն քաղաքականությունը, ինչ Ռուսաստանում: Դրա վառ վկայություններն են Հայհեղկոմի և Ժողկոմխորհի 1920-1922 թթ. ընդունած դեկրետները, որոշումներն ու հրամանները, Ռուսաստանի օրինակով Հայաստանում կիրառված «**ռազմական կոմունիզմի**» քաղաքականությունը՝ պարենմասնատրման, շարժական և անշարժ գույքի զանգվածային բռնագրավումների, բանկերի և երկաթուղիների պետականացման, պետական մենաշնորհի, հարկադիր աշխատանքի տեսքով, իսկ այնուհետև դրան փոխարինած անհամեմատ ավելի հավասարակշիռ **Նոր տնտեսական քաղաքականությունը** (**ՆԷՊ**): Դարձյալ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության վարած քաղաքականության օրինակով 1920-ական թթ. Հայաստանում ևս տեղի ունեցան այլախոհ կուսակցությունների լուծարումներ, հրապարակային դատեր, այլախոհ անհատ գործիչների հանդեպ քաղաքական բռնաճնշումներ՝ բանտ-աքսոր-գնդակահարություններ, բուն կոմկուսի շարքերի պարբերական զտումներ և այլն: Հատկանշական է Հայկոմկուսի՝ 1921 թ. դեկտեմբերի սկզբնե-

29 Նույն տեղում, էջ 3:

30 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայկական հարցը Ազգերի լիգայում 1920 թ., «Դրօշակ», 2001, N 4 (սեպտեմբեր), էջ 77-95:

ին կազմակերպած հրապարակային ցուցադրական դատը իր գաղափարաքաղաքական գլխավոր հակառակորդ ՀՅԴ–ի դեմ[31]:

Հայաստանի իշխանությունները, պատճենելով Ռուսաստանում իրականացվող քաղաքականությունը, չէին կարող այն չգործադրել, հակառակ պարագայում դա կորակվեր որպես հակակուսակցական քայլ՝ դրանից բխող հետևանքներով: Այս ամենը վկայում է Հայաստանի իշխանությունների, ուստի և հանրապետության՝ բոլոր ուղղություններով կենտրոնից անմիջական կախվածության ու ենթարկվածության մասին: Այսպիսով՝ այն պատմաբաններն ու իրավագետները, որոնք ՀՍԽՀ–ն համարում են անկախ պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ, մեղանչում են ճշմարտության առաջ: «Պատմություն գրելը,– խորհում է ռուս պատմաբան Անդրեյ Զուբովը,– պահանջում է ոչ միայն փաստերի արձանագրում, այլև դրանց բարոյական իմաստավորում»[32]: Պատմության բարոյական իմաստավորումը պահանջում է չշրջանցել պատմական ճշմարտությունը և փաստերը չհարմարեցնել վերևից պարտադրված կոնյունկտուրային պահանջներին, կուսակցական–հատվածական շահերին ու անձնական նախասիրություններին:

2. ԽՍՀՄ կազմավորման գործընթացի գնահատականները

Խորհրդային իրավական և քաղաքական գրականության մեջ ԽՍՀՄ կազմավորումը ներկայացվում էր որպես միութենական դաշնային և ոչ դաշնային չորս հանրապետությունների՝ **իրավահավասար** հիմունքներով և **կամավոր** սկզբունքով միավորում մեկ դաշնային միության մեջ[33]: Խորհրդային պատմաբանների, իրավագետների, քաղաքագետների և այլոց վերոնշյալ պնդումներին վերապահությամբ պետք է մոտենալ հետևյալ պարզ պատճառներով:

Նախ՝ դժվար թե չորս հանրապետությունների (ՌՍԴԽՀ, Ուկրաինայի ՍԽՀ, Բելառուսի ՍԽՀ և ԱՍԴԽՀ) միավորումը կարելի է համարել **իրավահավասար**, երբ ակնհայտ է ՌՍԴԽՀ գերակա դերը՝

31 Տե՛ս **Հակոբյան Ա.**, ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու Հայկոմկուսի փորձերը (1920-ական թվականներ), Եր., 2020, էջ 55-67:

32 «История России. XX век (1894-1939)», отв. ред. **А. Зубов**, М., 2009, с. 5.

33 Տե՛ս **Եսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 213, **Պետրոսյան Շ.**, Հայկական ՍՍՀ Սահմանադրությունը և նրա զարգացումը, էջ 4-5:

բոլոր չափանիշներով: Թեև ձևով ԽՍՀՄ-ն (1924 թ. և հետագա սահմանադրություններում) ներկայանում էր իբրև **հավասարների** դաշնություն, սակայն իրականում նրա ձևավորման հիմքում, ըստ էության, դրվել է 1922 թ. ամռանը Ի. Ստալինի գլխավորած ԽՍՀՄ կազմավորման պետական հանձնաժողովի (ՀՍԽՀ ներկայացուցիչն էր Ալ. Մյասնիկյանը) կազմած ինքնավարացման (ավտոնոմիզացիայի) նախագիծը, որն իբր խիստ քննադատության է ենթարկվել Վ. Լենինի կողմից: Վերջինս **ավտոնոմիզացիայի** սկզբունքի փոխարեն առաջ է քաշել ազգերի **իրավահավասարության** և **ինքնորոշման** իրավունքի ճանաչումը[34]: Մի պահ ընդունենք, որ արդեն ծանր հիվանդ Վ. Լենինը անկեղծորեն քննադատել է ինքնավարացման նախագիծը՝ առաջ քաշելով ինքնորոշման իրավունքով իրավահավասար հանրապետությունների դաշնության (ֆեդերացիա) ստեղծման տեսլականը: Հասկանալի է նաև, որ խորհրդային պատմագիտական գրականության մեջ տասնամյակներ շարունակ պաշտպանվել է լենինյան որակվող այդ սկզբունքը: Սակայն, ըստ էության, կիրառվել է ստալինյան ավտոնոմիզացիայի, ավելի ստույգ՝ ունիտար պետություն (կայսրություն) ստեղծելու նախագիծը: Եվ դժվար է պատկերացնել, որ որևէ ազգային-պետական միավոր, օգտվելով ազգերին տրվող ինքնորոշման մասին սահմանադրական իրավունքից, կփորձեր դուրս գալ նրա կազմից: Քանզի մինչև ԽՍՀՄ փլուզման գործընթացի սկզբնավորումը չի եղել «Միության կազմից ազատորեն դուրս գալու մեխանիզմը»[35]: Իհարկե, այն ժամանակ Հայկ. ՍՍՀ-ի համար կարող էր ծագել ԽՍՀՄ կազմից դուրս գալու **նպատակահարմարության** հարցը, որը, տնտեսական, քաղաքական և նույնիսկ սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված, այս կամ այն կերպ հայ հանրությանը հետ էր պահում նման քայլի դիմելու մտքից:

Երկրորդ՝ այն, որ Խորհրդային Միությունը **կամավորության** սկզբունքով չի ձևավորվել, երևում է թեկուզ կենտրոնական և հանրապետական ղեկավար շրջանակներում ծավալված սուր տարաձայնություններից ու պայքարից Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաի-

34 Տե՛ս **Լենին Վ. Ի.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 45, Եր., «Հայաստան» հրատ., 1983, էջ 252-255:

35 Տե՛ս «Образование СССР (сборник документов)», էջ 300, 370:

նայում և այլուր[36]: Հարկ է նշել, որ միության ձևավորման գործում հիմնական տարաձայնությունը եղել է **կոնֆեդերատիվ** (համադաշնային), **ֆեդերատիվ** (դաշնային), թե **ավտոնոմ** (ինքնավար) սկզբունքով միավորման հարցի շուրջ[37]: Այն առանձնապես սուր բնույթ էր ստացել **Վրաստանում**: Հայտնի է, որ Անդրդաշնության և ապա նաև ԽՍՀՄ կազմավորման գաղափարին Անդրկովկասից քիչ թե շատ ընդդիմացել են Վրաստանի կուսակցական-հանրային շրջանակները՝ Բուդու (Պ.) Մդիվանի, Ֆիլիպ Մախարաձե, Լ. Դումբաձե, Մ. Օկուջավա և ուրիշներ: Նրանք գտնում էին, որ պետք է պահպանվեն յուրաքանչյուր հանրապետության ազգային բանակը, սեփական արժույթը, արտաքին առևտուրը, կուսակցությունների ինքնավարությունը և այլն: Մեկ այլ տարբերակով Մդիվանու կողմնակիցները առաջարկում էին վերացնել Անդրդաշնությունը և Անդրկովկասի յուրաքանչյուր հանրապետությանը հնարավորություն տալ առանձին-առանձին մտնելու ԽՍՀՄ կազմի մեջ: Այդ, այսպես կոչված, «բուդիստների» խմբի դիրքորոշումը որակվեց որպես «**ազգային թեքում**»[38]: Վրաց կոմկուսի ղեկավարությունը, քողարկվելով լենինյան կոչված՝ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի կարգախոսով, իր ԿԿ 1922 թ. հոկտեմբերյան պլենումում անգամ որոշում էր կայացրել Անդրֆեդերացիայի լուծարման վերաբերյալ, որը, սակայն, մերժվել էր Մոսկվայի կողմից[39]: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ, ըստ էության, նման թեքում չի դրսևորվել: Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ. հունվար-փետրվար) Անդրֆեդերացիայի հար-

36 Տե՛ս «История КПСС», т. 4, кн. 1 (1921-1929 гг.), М., 1970, էջ 194, «Очерки истории коммунистических организаций Закавказья», ч. 2 (1921-1937 гг.), Баку, 1971, էջ 41, **Куличенко М. И.**, Образование и развитие Союза СССР, Ер., 1982, էջ 112-114, «История России. XX век», отв. ред. **Зубов А.**, М., 2009, էջ 771, **Ղարիբջանյան Գ. Բ.**, Լենինը և Անդրկովկասը, գ. 3 (1917-1924), Եր., 1975, էջ 377-378 և այլն:

37 Այստեղ խոսքը ոչ թե լենինյան հռչակված կեղծ **ինքնորոշման** իրավունքի իրացման, այլ ազգային-պետական միավորների՝ որոշակի սկզբունքով ու կարգավիճակով **միավորման** մասին էր: Պատմական զուգահեռի առումով ուշադրության է արժանի Ս. Դ. հնչակյան կուսակցության հայտնի տեսաբան-գաղափարախոս Ստ. Սապահ-Գյուլյանի՝ 1908 թ. երիտթուրքական պետական հեղաշրջման վերելքի շրջանում առաջ քաշած միտքը Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի՝ հնարավոր պետական կարգավիճակի ձեռքբերման վերաբերյալ: Նա արևմտահայության համար իբրև առաջին քայլ նախատեսում էր սկզբնապես «**ավտոնոմիա**» (ինքնավարություն), այնուհետև՝ «**կոնֆեդերացիա**» (համադաշնություն), իսկ վերջում՝ ճանապարհ դեպի «**անկախություն**» (տե՛ս **Սապահ-Գյուլյան Ստ.**, Սահմանի երկու կողմում, «Հնչակ», Փարիզ, 1908, ապրիլ-մայիս, N 4-5, էջ 30): Հասկանալի է, որ թուրքական բիրտ իրականության պայմաններում ազգային-պետական նման գաղափարը չէր կարող իրագործվել:

38 Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայոց պատմության ակնարկներ, Եր., 2018, էջ 335, **Հակոբյան Ա.**, Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Եր., 2016, էջ 297:

39 Տե՛ս «История Грузии», т. 3, Тб., 1968, էջ 17-18, «История России. XX век (1894-1939)», էջ 771:

ցում որոշ առարկություն է հայտնել Էսէռ Գր. Չուբարը[40]: Եվ դա պետք է բացատրել Հայաստանի աշխարհաքաղաքական վիճակով, նրա սոցիալ-տնտեսական պայմաններով, ինչպես նաև հայ ժողովրդի՝ Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հետ պատմականորեն կապված լինելու հանգամանքով:

Այդուհանդերձ, իրականությունն այն է, որ Անդրդաշնությունը և ԽՍՀՄ-ն կազմավորվել են կենտրոնի գիտությամբ ու հրահանգով՝ իբրև ազգային հարցի լուծման ձևեր, առանց ժողովրդի կամքն ու կարծիքը հաշվի առնելու: Իհարկե, ձևականորեն ցուցադրական, քարոզչական միջոցառումներ անցկացվել են, բայց իրականում գործել է քողարկված պարտադրանքը: Սակայն, մյուս կողմից, այլընտրանք չլինելու պատճառով Հայաստանի ու հայ հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ շահերի տեսանկյունից Անդրդաշնության ու ԽՍՀՄ ստեղծումը տվյալ պատմաշրջանում, անշուշտ, անհրաժեշտ քայլ պետք է համարել:

Եվ վերջապես, կյանքը ցույց տվեց, որ ԽՍՀՄ կազմավորմամբ այդ բազմազգ տերությունում ոչ թե «մեկընդմիշտ և անդառնալիորեն» լուծվեց ազգային հարցը, ինչպես ընդունված էր հայտարարել 70 տարի շարունակ, այլ ընդամենը արտաքին բիրտ ուժի, վախի, նաև կեղծ եղբայրության քարոզչության միջոցով այն կոծկվեց ու կոնսերվացվեց և կրկին բարձրացավ արդեն 1980-ական թթ. երկրորդ կեսին՝ այսպես կոչված գորբաչովյան «վերակառուցման» շրջանում:

3. Մոսկվայից քաղաքական-կուսակցական կախվածության այլ դրսևորումներ

Ստորև ներկայացվող բազում փաստերը լրացուցիչ անգամ ընթերցողին կարող են համոզել, որ հանրապետության կուսակցական-քաղաքական ղեկավարման առումով ևս չէր կարող խոսք լինել Հայաստանի անկախության մասին: Հայտնի է, որ բոլշևիկյան կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը ենթադրում էին ներքևից վերև խիստ կենտրոնացված գաղափարական, կազմակերպականոնադրական ենթարկվածության միասնական համակարգ: Տակավին

40 Տե՛ս **Хармандарян С. В.**, Ленин и становление Закавказской федерации 1921-1923, Ер., 1969, էջ 221:

Հայկոմկուսի ձևավորման ժամանակ (1920 թ. հունիսի 30) ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն որոշել էր նրան տալ մարզային կազմակերպության իրավունքներ՝ ենթարկելով ԿԿ Կովկասյան բյուրոյին[41]: Այսինքն՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմն օգտվում էր կուսակցության մարզային կոմիտեի իրավունքներից և ամբողջովին ենթակա էր ՌԿ(բ)Կ Կենտկոմին: Դա ամրագրվել է նաև ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարում (1925 թ. դեկտեմբեր) ընդունված կանոնադրության մեջ (կետ 32). «ՍՍՀՄ և ՌՍՖԽՀ ազգային հանրապետությունների (և մարզերի) տերիտորիաներն սպասարկող կուսակցական կազմակերպությունները հավասարեցվում են կուսակցության մարզային (կամ նահանգային) կազմակերպություններին, այսինքն՝ ամբողջապես ենթարկվում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմին»[42]: Այլ խոսքով՝ ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր հանրապետության կոմունիստական կուսակցություն ուներ ընդամենը մարզային կազմակերպության իրավասություն: Եվ ինքնին հասկանալի է, որ մարզային կազմակերպության կարգավիճակ ունեցող Հայկոմկուսը, որը հանրապետության միակ ղեկավար ուժն էր, չէր կարող ՌԿ(բ)Կ Կենտկոմի ենթակայությունից դուրս, ինքնուրույն, անկախ քաղաքականություն վարել: Այս կապակցությամբ պրոֆ. Վլ. Ղազախեցյանը գրում է. «Հայկոմկուսի միջոցով Հայաստանում իրականացվում էր ՌԿ(բ)Կ քաղաքականությունը»[43]: Վիճակը նույնն էր նաև մյուս հանրապետությունների դեպքում: Նշանակում է, որ կուսակցական-քաղաքական ղեկավարման առումով ևս ՀՍԽՀ-ն անկախ չէր:

Մեր համոզմամբ՝ 1920-1922 թթ. Խորհրդային Հայաստանի, նույն կերպ և անդրկովկասյան մյուս հանրապետությունների անկախությունը ձևական էր: Համեմատության կարգով կարելի է ասել, որ Հայաստանն անկախ էր Ռուսաստանից այնքանով, որքանով անկախ էր նրա գլուխ կանգնած քաղաքական ուժը՝ Հայկոմկուսը, ՌԿ(բ)Կ-ից:

Որ բավարար հիմքեր չկան խոսելու Խորհրդային Հայաստանի անկախության մասին, վկայում են բազում փաստեր ու փաստարկներ: Խորհրդային Հայաստանի՝ Ռուսաստանից կախվածությունը մեծապես արտահայտվում էր իրավաօրենսդրական դաշտում: Այդ մա-

41 Տե՛ս «Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Եր., 1967, էջ 298:

42 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», հատ. 3 (1922-1925), Եր., 1987, էջ 633:

43 **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 17:

սին էր վկայում, օրինակ, այն իրողությունը, որ Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով Խորհրդային Հայաստանի տարածքում վերացվում էին ՀՀ-ում գործող բոլոր օրենքները, այդ թվում՝ ցարական շրջանի «Հավաք Օրինաց»-ը, և դրանց փոխարեն **միակ գործող օրենքներ էին հռչակվում ՌՍԴԽՀ օրենքներն ու դեկրետները՝** այն փոփոխություններով ու լրացումներով, որոնք կմտցնեին Հայհեղկոմը և այլ իրավասու մարմիններ[44]: Հայհեղկոմի այս դեկրետը հետագայում իր օրենսդրական ձևակերպումն ստացավ ՀՍԽՀ Սահմանադրության 10-րդ հոդվածում[45]: 1922 թ. հուլիսից ՌՍԴԽՀ օրինակով ստեղծվում է հեղափոխական օրինականության պահպանման մարմին՝ դատախազություն: Վ. Լենինի ցուցումով դատախազական հսկողությունն ընդհանուր դարձավ ոչ միայն համառուսաստանյան, այլև բոլոր խորհրդային հանրապետությունների (այդ թվում՝ ՀՍԽՀ-ի) համար[46]: ՌՍԴԽՀ օրինակով 1922 թ. հուլիսի 22-ին Խորհրդային Հայաստանի ԿԳԿ-ն ընդունեց նաև ՀՍԽՀ քրեական օրենսգիրքը[47]:

Որ «անկախ» ՀՍԽՀ կառավարությունը գործնականում ինքնուրույնություն չի ունեցել, և հանրապետության կյանքին վերաբերող բոլոր կարևոր հարցերը լուծում էր Մոսկվան, երևում է հետևյալ հայտնի փաստից: Ինչպես արդեն ասվել է, մինչև կուսակցական և պետական ականավոր գործիչ **Ալ. Մյասնիկյանի**՝ 1921 թ. մայիսի սկզբին (4-ին) Երևան ժամանելը՝ դեռևս 1921 թ. մարտի վերջին, ՌԿ(բ)Կ ԿԿ կազմբյուրոն որոշում էր կայացրել նրան նշանակելու Հայհեղկոմի (այսինքն՝ կառավարության) նախագահ[48]: Չդիպչելով Ալ. Մյասնիկյանի անձին ու մեծ հեղինակությանը՝ փաստենք, որ կենտրոնը (Մոսկվան) նրան Հայաստանի կառավարության նախագահի պաշտոնում նշանակեց առանց թեկուզ ձևականորեն տեղում՝ Հայաստանում լսելու և քննարկելու (հարցնելու) «անկախ» համարվող ՀՍԽՀ իշխանությունների կարծիքը: Սա ավելորդ անգամ վկայում է Խորհրդային Հայաստանի պետական ինքնիշխանության բա-

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 21, «Դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջմիածին, 1921, էջ 25, «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов)», под ред. **Мнацаканяна А**. и др., Ер., 1957, էջ 480-481:

45 Տե՛ս «ՀՍԽՀ Սահմանադրութիւնը (Հիմնական որենք)», էջ 3:

46 Տե՛ս **Պետրոսյան Շ.**, Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Եր., 1961, էջ 57:

47 Տե՛ս «Քրեական որենսգիրք», ընդունված ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի Գ նստաշրջանի 1922 թ. հուլիսի 22-ի նիստում, Յեր., Տրեստի առաջին տպարան, 1922, էջ 66:

48 Տե՛ս «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.)», Եր., 1987, էջ 54:

ցակայության մասին: Թեև 1921 թ. մայիսի 21-ի դեկրետով ՀՌՀԿ-ն վերանվանվեց ՀՍԽՀ Ժողկոմխորհ, որի գլուխ անցավ Մոսկվայից ժամանած Ալ. Մյասնիկյանը[49], սակայն շարունակում էին պահպանվել կառավարման նախկին համակարգը, ոչ ընտրովի հեղկոմները և պետական իշխանության մյուս կառույցները գավառներում, գավառակներում և գյուղերում: Պրոֆ. Վլ. Ղազախեցյանի դիտարկմամբ՝ «ֆունկցիաների իմաստով նա (Ժողկոմխորհը – Ա. Հ.) նույն ռազմ-հեղկոմն էր՝ օրենսդիր և գործադիր իրավունքներով»[50]: Հեղկոմները պահպանվեցին մինչև 1922 թ. սկզբները, երբ 1921 թ. դեկտեմբերից 1922 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում դասակարգային խտրական (ակտիվ և պասիվ) ընտրակարգով անցկացված ընտրություններով ձևավորվեցին բանվորա-գյուղացիական իշխանություն անվանվող խորհուրդները: Ժողկոմխորհը, ինչպես Հայհեղկոմը, ընդօրինակելով համառուսական օրենքները կամ համաձայնեցնելով կենտրոնի (Մոսկվայի) հետ, հրապարակում էր դրանք դեկրետների (հրովարտակ) և օրենքի ուժ ունեցող որոշումների տեսքով: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ «անկախ» որակվող ՀՍԽՀ-ն պետական ու կուսակցական բարձրագույն իշխանության մարմինների կառուցվածքային փոփոխությունների ու բարձր ղեկավար պաշտոնների նշանակման հարցերում չի ունեցել անկախ պետությանը բնորոշ ինքնուրույնություն, և անգամ հանրապետության ընտրովի օրենսդիր մարմին հանդիսացող Գերագույն խորհրդի առկայության պայմաններում այդ պրակտիկան շարունակվել է Խորհրդային Հայաստանի գոյության 70 տարիների ընթացքում:

Կրկին անդրադառնալով Ալ. Մյասնիկյանի՝ Հայաստան ժամանման իրողությանը՝ կատարենք մեկ այլ դիտարկում: Հայտնի է, որ Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Հայհեղկոմի ներման մասին դեկրետը հրապարակվել է 1921 թ. ապրիլի 10-ին, համաներմանն ընդունվել է ապրիլի 23-ին և հրապարակվել 24-ին[51]: Համաներումը արտոնում էր անհապաղ բանտերից ազատել բոլոր

---

49 Հայտնի է, որ մայիսի սկզբին ժամանելով Հայաստան՝ Մյասնիկյանն իր հետ բերել էր Վ. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի հանրահայտ ծրագրային դեկրետ-նամակը՝ ուղղված «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների Հանրապետության կոմունիստ ընկերներին» (այդ նամակը տե՛ս **Լենին Վ. Ի.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 43, Եր., «Հայաստան» հրատ., 1982, էջ 237-240):

50 **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., էջ 227:

51 Տե՛ս «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջմիածին, Պետ. հրատ., 1921, էջ 10-12, 20-21:

քաղբանտարկյալներին: Այն տարածվում էր նաև ապստամբության ղեկավարների վրա: Պարզվում է, սակայն, որ մայիսի 12-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվել է նոր դեկրետ, որով փաստորեն վերադարձ է կատարվել ապրիլի 10-ի մասնակի ներմանը, այսինքն՝ համաներման գործընթացը սահմանափակվել է ապրիլի 10-ի դեկրետի շրջանակներում: Մյասնիկյանը դա արել է՝ հիմք ունենալով ապրիլի 23-ի համաներման առնչությամբ ՀՍԽՀ Չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանի դժգոհությունը[52]:

Հետաքրքրական է, որ մայիսի 4-ին Հայաստան ժամանած Ալ. Մյասնիկյանը, որին Մոսկվան գործուղել էր Հայաստան՝ ղեկավար աշխատանքի, տեղում իրավաբանորեն դեռևս համապատասխան պաշտոն չէր ստանձնել (նա վարչապետ է հաստատվել մայիսի 19-ին), բայց ստորագրել է մայիսի 12-ի վերոնշյալ դեկրետը այն դեպքում, երբ Հայհեղկոմի նախագահը դեռևս Ս. Կասյանն էր: Այս փաստը ևս վկայում է, որ տեղին չէ խոսել Հայաստանի կառավարության ինքնուրույնության ու անկախության մասին:

Որպեսզի պատկերն ավելի ամբողջական լինի, բերենք այլ փաստարկներ: Ասենք՝ «անկախ» Հայաստանի կառավարության ի՞նչ ինքնուրույնության մասին կարող է խոսք լինել, երբ 1921 թ. հունվարի կեսին Երևան ժամանած Ռուսաստանի Չեկայի լիազոր Գ. Աթարբեկյանը, անտեսելով Ս. Կասյանի ղեկավարած կառավարությանը, ձեռնարկում էր ինքնագլուխ քայլեր: Կամ թեկուզ դիտարկենք Հայաստանի նախկին բանակի 1400-ի հասնող սպաների ու զինծառայողների՝ 1921 թ. հունվարյան սառնամանիքի պայմաններում գրեթե կիսամերկ աքսորը Բաքվով դեպի Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներ[53]: Ինչպես պարզվում է վավերագիր նյութերից, հին սպայակազմի աքսորի վերաբերյալ հրահանգը տրվել էր Մոսկվայից 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին անձամբ ՌՍԴԽՀ ռազմական գործերի ժողկոմ և Ռազմահեղափոխական խորհրդի նախագահ **Լև Տրոցկու** կողմից[54]:

52 Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2011, N 1, էջ 47:

53 Տե՛ս **Տասնապետեան Հ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 144, «Հայոց պատմություն», հատ. 4, գ. 1, Եր., 2010, էջ 296:

54 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества: Документы и комментарий», т. 1, ч. 1, сост. проф. **Барсегов Ю. Г.**, М., 2002, էջ 337:

Հետխորհրդային այն հեղինակները, որոնք կարծում են, որ 1920–1922 թթ. ՀՍԽՀ-ն, այնուամենայնիվ, ինքնիշխան պետություն էր, բերում են իրենց այն փաստարկը, որ, ինչպես արդեն ասվել է, նա իբրև անկախության դրսևորում դիվանագիտական հարաբերություններ ու կապեր է ունեցել հարևան մի քանի պետությունների հետ, լիազոր ներկայացուցիչներ փոխանակել, արտաքին առևտուր իրականացրել, կոնցեսիաներ թույլատրել և այլն: Դրան կարելի է առարկել հետևյալ փաստարկով: Բանն այն է, որ ՌՍԴԽՀ բոլշևիկյան կառավարությունը խորհրդային նորահռչակ հանրապետություններին, այդ թվում՝ Վրաստանին ու Ադրբեջանին, հաճախ էր մղում առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու (առևտուր անել, բեռնափոխադրումներ իրականացնել, հանքեր ու ձեռնարկություններ կոնցեսիայով վարձակալության տալ և այլն) կապիտալիստական երկրների հետ: Դա պայմանավորված էր նրանով, որ այդ շրջանում կապիտալիստական խոշոր երկրները չէին ճանաչում Խորհրդային Ռուսաստանը, նրան շրջափակման էին ենթարկել, չէին ցանկանում առևտրատնտեսական հարաբերություններ հաստատել նրա հետ և այլն: Ուստի Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությունից դուրս գալու ուղիներից մեկն էլ համարում էր նորահռչակ խորհրդային հանրապետությունների խրախուսումը, որպեսզի նրանք ինքնուրույն դիվանագիտական ու առևտրատնտեսական կապեր հաստատեն: Սակայն դա դեռ չէր նշանակում, թե այդ հանրապետությունները, այդ թվում՝ Հայաստանը, միջազգային իրավունքի սուբյեկտ համարվող անկախ պետություններ էին:

Խոսելով ՌՍԴԽՀ-ի և Անդրկովկասի «անկախ» հանրապետությունների փոխհարաբերությունների մասին՝ տեղին է արձանագրել ևս մեկ ուշագրավ փաստ: Երբեմն անդրկովկասյան հանրապետությունների ղեկավարները փորձել են կշտամբել կենտրոնական իշխանություններին: Այսպես՝ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոն 1921 թ. ամռանը կայացած իր ընդլայնված նիստում խնդրել է ՌԿ(բ)Կ ԿԿ-ին, որ «այսուհետ առանց Անդրկովկասի հանրապետությունների գիտության այստեղ չուղարկվեն Չեկայի և այլ լիազոր ներկայացուցիչներ ու հա-

տուկ արշավախմբեր, իսկ եթե ուղարկվում են, ապա գոնե պետք է նախապես համաձայնեցվեն Կովբյուրոյի միջոցով»[55]:

Բերված փաստից կարելի է երկու հետևություն անել. մի կողմից՝ Անդրկովկասի հանրապետություններն իրոք կախված էին կենտրոնից, որովհետև առանց նրանց գիտության Չեկայի լիազորներ էին ուղարկվում տարածաշրջան, ինչպիսին էր, օրինակ, Գևորգ Աթարբեկյանը Հայաստանի պարագայում, մյուս կողմից՝ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոն՝ հանձինս Օրջոնիկիձեի, Մյասնիկյանի, Նարիմանովի և մյուսների, հասկացնել էր տալիս Մոսկվային, որ եթե, իրոք, իրենց հանրապետություններն անկախ են, ապա պետք է հարգել իրենց ինքնիշխանությունը և գոնե առանց նախնական իրազեկման չեկիստներ և այլ լիազոր հսկիչներ չուղարկել տարածաշրջան:

Եվ վերջապես, նշենք Հայաստանի՝ Մոսկվայից ունեցած կախվածության մասին վկայող առավել **աղաղակող** մի փաստ: Խորհրդային Հայաստանի միջազգային իրավական ի՞նչ անկախության մասին կարող է խոսք լինել, երբ միջազգայնորեն չճանաչված երկու երկրներ՝ Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, 1921 թ. փետրվար–մարտին Մոսկվայում բանակցություններ են վարում և պայմանագիր կնքում իրար միջև՝ մասնավորապես որոշելով մի երրորդ կողմի՝ Հայաստանի համար ճակատագրական նշանակություն ունեցած տարածքային–սահմանային հարցերը առանց վերջինիս պատվիրակության գիտության ու մասնակցության: Ձավեշտալին այն է, որ Մոսկվա մեկնած «անկախ» Հայաստանի պատվիրակությանը (ղեկ.՝ Ալ. Բեկզադյան) անգամ չթույլատրվեց ներկա գտնվել պայմանագրի ստորագրման արարողությանը: Ավելին՝ պարզվում է, որ Հայաստանի պատվիրակությունը նույնիսկ տեղյակ չի եղել, թե երբ է ստորագրվել պայմանագիրը: Կնքված ռուս–թուրքական պայմանագրով Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող երկրամասերը՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն և Նախիջևանը, բռնակցվեցին Թուրքիային կամ Ադրբեջանին, ինչը միջազգային պայմանագրային իրավունքի տեսանկյունից կոպիտ խախտում է[56]: Եվ այս ամենը այն դեպքում, երբ Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. դրու–

55 ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 45, թ. 8:

56 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 211-212, **Акопян А.**, Московский и Карсский договоры в судьбе армянского народа, Ер., 2021, էջ 71:

թյամբ անգամ ռազմաքաղաքական բնույթի որևէ դաշնագիր (պայմանագիր) չի ունեցել Հայաստանի հետ, չնայած նման պարագայում ստորագրող կողմերը պարտավորված են լինում ճանաչելու միմյանց ինքնիշխանությունը և անկախությունը: Ի դեպ, ՌՍԴԽՀ-ն 1920 թ. սեպտեմբերի 30-ին ռազմաքաղաքական նման պայմանագիր կնքել էր Ադրբեջանի հետ, իսկ 1921 թ. մայիսին՝ Վրաստանի: Իսկ ՀՍԽՀ-ն և ՌՍԴԽՀ-ն նման պայմանագրային պարտավորվածությամբ կապված չեն եղել միմյանց հետ, որով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն իրավապես ինչ-որ չափով հիմք կունենար տնօրինելու Հայաստանի տարածքները և որոշելու նրա պետական սահմանները[57]: Այսքանից հետո, կարծում ենք, հազիվ թե կարելի է խոսել 1920-1922 թթ. Խորհրդային Հայաստանի՝ քաղաքական, առավել ևս միջազգային իրավական չափումներով **անկախ** պետություն լինելու մասին:

Այսպիսով՝ բերված փաստավավերագիր հարուստ նյութերը և պատմական իրողությունները համոզիչ կռվաններ են՝ հերքելու խորհրդային և մասամբ հետխորհրդային հեղինակների՝ քննությանը չդիմացող այն պնդում-տեսակետը, թե ՀՍԽՀ-ն 1920-1922 թթ. անկախ պետություն էր: Առավել ևս խոսք չի կարող լինել Անդրդաշնային հանրապետության կամ առանձին խորհրդային հանրապետության կարգավիճակով ԽՍՀՄ կազմում գտնվելիս Խորհրդային Հայաստանի քիչ թե շատ անկախ լինելու մասին: Ասվածը հիմնավորելու համար բերենք ևս մեկ հատկանշական փաստ: Այսպես՝ 1944-1947 թթ. ԽՍՀՄ կառավարության նախաձեռնությամբ բարձրացվեց հայկական հողերի (Կարս, Արդահան) վերադարձի խնդիրը, սակայն արտաքին ուժերի (ԱՄՆ, Անգլիա) սաստմամբ հետագայում ԽՍՀՄ ղեկավարությունը հետ կանգնեց այդ մտադրությունից և 1953 թ. մայիսի 30-ին «անկախ» Հայաստանի անունից պաշտոնապես հայտարարեց, որ «Հայաստանի (նաև Վրաստանի – Ա. Հ.) կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից»[58]: Այսինքն՝ ԽՍՀՄ կառավարությունը Հայկ. ԽՍՀ-ի անունից պատասխանում էր Թուրքիայի կառավարությանը, որ Հայաստանը տարածքային պահանջ չունի, իսկ հայտարարության վերջում՝ եզրակացնում, որ «Խորհրդային Միությունը Թուր-

57 Տե՛ս **Саркисян Е. К.**, За кулисами, как рождался Московский договор 1921 г., «Литературная Армения», Ер., 1991, N 1, էջ 81:
58 **Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով (1945-1957 թթ.), Եր., 2001, էջ 62:

քիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»[59]: Ահա թե ինչ արժեք է ունեցել Խորհրդային Հայաստանի «անկախությունը» ոչ միայն 1920–1922 թթ., այլև առավել ևս ԽՍՀՄ կազմում գտնվելու ընթացքում: Ընդ որում, նմանօրինակ բազում փաստեր կարելի է արձանագրել:

ԽՍՀՄ նախկին հանրապետությունների «անկախության» չգոյության մասին է վկայում նաև ժամանակին դրանց՝ տարածքային-սահմանային առումով հստակ սահմանազատված չլինելու փաստը: Եվ դրա արտահայտություններից են ներկայումս ժամանակ առ ժամանակ ծավալվող սահմանային վեճերը, որոնք հաճախ վերաճում են ռազմական բախման, նույնիսկ պատերազմի, ինչպես, օրինակ, հայ-ադրբեջանական, տաջիկա-ղրղզական բախումները և այլն:

Զուգահեռներ անցկացնելով ՀՀ և ՀՍԽՀ անկախության հարցի շուրջ հայ պատմագրության մեջ արտահայտված տեսակետների միջև՝ կարելի է արձանագրել հետևյալը: Սփյուռքյան և հետխորհրդային գրեթե բոլոր հեղինակները աներկբա ընդունել և ընդունում են Հայաստանի առաջին հանրապետությունը՝ իր բոլոր ինստիտուցիոնալ տարրերով՝ պետականություն, պետություն և անկախություն: Դրան հակառակ՝ խորհրդահայ պատմաբանները, նաև իրավաբանները, ելնելով գաղափարաքաղաքական նպատակահարմարությունից, փաստորեն չեն ընդունում Առաջին հանրապետության ոչ միայն անկախությունը, այլև պետականության գոյության փաստը՝ իրենց պատկերմամբ «դաշնակցական Հայաստանը» ներկայացնելով իբրև բուրժուական, ժողովրդի թշնամի, իմպերիալիզմի գործակալ և այլն:

Հարց է ծագում. կարելի՞ է արդյոք Առաջին հանրապետության կախվածությունն Անտանտից ու ԱՄՆ-ից նմանեցնել ու նույնացնել ՀՍԽՀ-ի՝ Խորհրդային Ռուսաստանից կախվածության հետ: Որքան էլ սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական առումներով Առաջին հանրապետության դրությունն աննկարագրելիորեն ծանր էր ու բարդ, որքան էլ նրա կառավարությունը ջանում էր Անտանտի ու ԱՄՆ-ի օգնությամբ լուծելու Հայկական հարցը և ստանալու հովանավորություն ու նյութական օժանդակություն, բայցևայնպես, այդ կախվածությունն իրավաքաղաքական առումով անհամեմատելի է ՀՍԽՀ-ի՝ ՌՍԴԽՀ-ին ենթակայության հետ: Վերջին դեպքում դա ունեցել է համապարփակ բնույթ՝ ընդգրկելով արտաքին ու ներքին քա-

59 Նույն տեղում:

ղաքականության, իրավաօրենսդրական, կառավարչական, տնտեսական, ֆինանսական, կադրային, ռազմական, կրթամշակութային և բազում այլ ոլորտներ:

Այդուհանդերձ, եթե 1920–1922 թթ. ՀՍԽՀ-ն, թեկուզ ձևականորեն, բայց ուներ ինքնիշխանություն կամ լիիշխանություն, ապա շուտով Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումով դա էլ կորցրեց՝ պահպանելով պետականությունը, և այդ վիճակը պահպանվեց մինչև 1991 թ. ԽՍՀՄ փլուզումը: Իսկ անկախության հռչակումից հետո ՀՀ-ն ձեռք բերեց անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ դառնալով միջազգային իրավունքի սուբյեկտ:

Ինքնին հասկանալի է, որ խորհրդահայ պատմաբանների և իրավաբանների կողմից թմբկահարվող Խորհրդային Հայաստանի անկախությունը պատրանքային էր ու դեկորատիվ, ինչը նպատակ ուներ արտաքին ու ներքին քարոզչական ճակատներում ցույց տալու, թե իբր կենսագործվել է զուտ դեկլարատիվ բնույթ կրող՝ ազգերի ինքնորոշման մասին լենինյան ծրագիրը, և ԽՍՀՄ եղբայրական միության մեջ մեկընդմիշտ լուծված է ազգային հարցը: Իսկ թե ինչպես էր լուծվել այդ հարցը, մեր ժամանակների իրողությունների լույսի ներքո արդեն ամենքին է հայտնի: Նախկին ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրության մասին կեղծ քարոզչության արժեքն առավել ակնառու է դառնում նրա նախկին տարածքում ժամանակ առ ժամանակ ծավալվող պատերազմական իրադարձություններով, որոնք ցույց են տալիս, որ 70 տարի շարունակ «համերաշխ ու եղբայրական» հայտարարված ժողովուրդների միջև դեռ կան բազում չլուծված խնդիրներ:

4. Հանրագումարներ ու գնահատականներ

Պատմական իրականությունն այն է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագրով Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից գրեթե բոլոր չափանիշներով՝ պետաիրավական, արտաքին ու ներքին քաղաքականության, վարչատնտեսական, կառավարման, տարածքային-ռազմապաշտպանական, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային, Խորհրդային Հայաստանի պետական իշխանության առաջին մարմինը՝ Հայհեղկոմը, առաջնորդվել ու ղեկա-

վարվել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի և ՌՍԴԽՀ կառավարության կողմից՝ ընդ-օրինակելով նրա օրենքները, իրավական ակտերը, որոշումները, հրա-հանգները և ընթացիկ քաղաքականությունը: Դրանից մեկ-երկու տարի անց՝ արդեն ԽՍՀՄ կազմավորման նախապատրաստական փուլում, այդ ինտեգրացիան ավելի խորացավ, և Հայաստանի հետ միասին խորհրդային հռչակված Ադրբեջանը, Վրաստանը և ազգա-յին-պետական մյուս միավորները ավելի միասնացան: Հեռագնա նպատակներ հետապնդող կոմունիստական կուսակցությունը խոր-հուրդների 1922 թ. դեկտեմբերի 30-ի համամիութենական 1-ին հա-մագումարում ընդունած միության մասին ակտով և հրապարակած հռչակագրով ավարտին հասցրեց այդ գործընթացը, և միջազգային-իրավական առումով ձևավորվեց ԽՍՀՄ-ն իբրև մեկ ամբողջական բազմազգ, անվանումով **դաշնային**, սակայն էությամբ **ունիտար** տե-րություն: Ուրեմն մինչև ԽՍՀՄ կազմավորումը կամ նույնիսկ մինչև 1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնության ստեղծումը Խորհրդային Հա-յաստանն անկախ է՞ր, թե՞ ոչ: Ժամանակի պատմական վավերագրե-րը և իրական պատմությունը բավարար հիմք չեն տալիս եզրակաց-նելու, թե ՀՍԽՀ-ն 1920-1922 թթ. եղել է անկախ: Այն առավել ևս ան-կախ չի եղել 1922 թ. գարնանից՝ անդրդաշնային միության, ապա՝ նույն թվականի դեկտեմբերի 30-ին, անդրդաշնային հանրապետու-թյան կարգավիճակով ԽՍՀՄ կազմում հայտնվելուց հետո՝ մինչև 1990-1991 թթ. նրա փլուզումը:

Արդեն 20-րդ դարավերջին Հայաստանի ու հայ ժողովրդի հա-մար ազգային-քաղաքական ինքնագիտակցության աճի նոր փուլ նշանավորվեց 1988 թ. սկսված Արցախյան շարժումով ու Հայաստա-նի անկախացման գործընթացով, որոնց հետևանքով էլ համաժո-ղովրդական ձայնատվությամբ 1991 թ. սեպտեմբերին հռչակվեց Հա-յաստանի անկախությունը: Չնայած բազում դժվարություններին՝ վեր-ջին երեք տասնամյակների մեծագույն ձեռքբերումը պետք է համարել 70-ամյա ընդմիջումից հետո ՀՀ անկախության վերականգնումը, սե-փական ազգային-պետական ճակատագրի տնօրինումը: Այսպիսով՝ ԽՍՀՄ փլուզումով և Հայաստանի քաղաքական անկախության վե-րականգնումով, կարելի է ասել, ուղիղ **հոգևոր կապ** ստեղծվեց Առաջին հանրապետության հետ իր պետական ատրիբուտների՝ դրո-շի, օրհներգի ու զինանշանի, պետահիրավական ու տնտեսական հա-

մակարգերի, ժողովրդավարական այլ արժեքների որդեգրմամբ: Եվ այս իմաստով պատմության գիրկն է անցնում «դեկտեմբերի 2»-ը, և անմիջական ժառանգորդական կապ է ստեղծվում Հայաստանի առաջին և ներկա հանրապետությունների միջև որպես օրինաչափ շարունակություն:

Կրկին անդրադառնալով մեր ժամանակներին և պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով 20-րդ դարի հայոց երեք պետությունների միջև՝ կարելի է հետևեցնել, որ իրավահաջորդության ու ժառանգորդության ներքին կապ կա դրանց միջև, որոնք հաջորդաբար «բարձրացել են» նախորդի հիմքի վրա: Պատահական չէ, որ Սփյուռքի ճանաչված մտավորական-հուշագիր Վահե Արծրունին Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ խորաթափանց կանխատեսում էր անում. «Հայկական անկախությունն առայժմ գնաց»[60]: Այսինքն՝ գնաց, որպեսզի 70 տարի անց կրկին վերադառնար, բայց արդեն նոր պայմաններում, նոր պահանջներով, արժեհամակարգով ու նաև մարտահրավերներով, նոր խնդիրներով ու հեռանկարով:

Տարբեր մոտեցումների քննությունը ցույց է տալիս, որ անառարկելի է Առաջին հանրապետության՝ անկախ պետություն լինելու պատմական փաստը, իսկ նրա իրավահաջորդ Խորհրդային Հայաստանը, չնայած 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով անկախության արձանագրմանը, ի սկզբանե, այսինքն՝ մինչև ԽՍՀՄ կազմավորումը, գործնականում չի ունեցել **անկախություն**, սակայն պահպանել է **պետականությունը**, ըստ էության, խորհրդային համակարգի գոյության 70 տարիների ընթացքում, և պետականության այդ կարգավիճակը պատմական դեպքերի ու իրադարձությունների բնականոն զարգացումով այն փոխանցել է Երրորդ հանրապետությանը: Այդ համատեքստում պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով մեր ժամանակների երեք պետությունների միջև՝ ակներև է դառնում դրանց **իրավահաջորդության**, **ժառանգորդության** և ներքին **հոգևոր** կապը՝ դրանց քաղաքական, գաղափարական, պետաիրավական, սոցիալ-տնտեսական բազում յուրահատկություններից անկախ:

60 **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Եր., «Մուղնի» հրատ., 2002, էջ 339:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի առաջին հանրապետության, հայ քաղաքական կուսակցությունների, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, 1937 թ. խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի պատմության հիմնահարցերը: Հեղինակել է շուրջ 20 մենագրություն, բուհական ուսումնական ձեռնարկ, 100-ից ավելի գիտական հոդված և այլն:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

ON THE "INDEPENDENCE" OF THE ARMENIAN SSR FROM 1920 TO 1922

On the occasion of 100th anniversary of the formation of the USSR

Ararat M. Hakobyan
Doctor of Sciences in History

Keywords - Soviet Armenia, 1920, USSR, Al. Myasnikyan, statehood, independence, I. Stalin, Kavbiuro, historiography, republic, constitution, party, sovereignty.

Armenian historians and jurists in different periods gave different assessments of the state-legal status of the Armenian Soviet Socialist Republic (ASSR) from 1920 to1922. Historians and jurists of the Soviet period, guided by the Soviet communist worldview, class ideology and methodology, in their works, for obvious reasons, as a rule, denied the existence of the independent statehood of the First Republic of Armenia. They tried to present as a period of real "independence" and "freedom" of Armenia and the Armenian people not only the existence of 1920-1922 Soviet Armenia, but also the entire period when Soviet Armenia was a part of the Transcaucasian Federation and the USSR. Unquestionably, by the modern standards of the historical science, these arguments do not correspond to reality. The assertion of the Soviet authors that allegedly only with the "November Revolution" of 1920 and the Sovietization of Armenia did the Armenian people gain true independence does not correspond to reality.

With all this, however, one cannot deny the contribution of the Soviet historiography, especially in the direction of collecting and publishing historical

Վէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

documents and materials. Besides, we just need to understand the time and appreciate what happened.

Unlike Soviet authors, post-Soviet historiography, as well as historians of the Armenian Diaspora in their vast majority, guided by the principle of an objective presentation of history, rightly believe that with the fall of Armenia and the Sovietization of Armenia, it, in fact, lost its independence and became just an integral part of the Soviet Russia (RSSFR). Another group of researchers believes that before the formation of the Transcaucasian Federation and the USSR, the ASSR was a sovereign state in terms of a number of parameters (characteristics), etc.

Considering these different approaches, once again in the spirit of the modern requirements of the historical science, it can be noted, that the historical fact of the independent statehood of the First Republic of Armenia is indisputable. And its legal successor, Soviet Armenia, despite the fact that in the Yerevan Agreement of December 2 it was proclaimed independent, however from the very beginning, i.e., including (1920-1922) before the formation of the USSR, had practically no **independence** in essence, and throughout the existence of the entire Soviet system, but retained **statehood**.

For 70 years, this status of statehood preserved, which in the era of the fall of the USSR passed to the Third Republic of our time. In this context, conducting historical comparative parallels between the three Armenian republics of our time, regardless of the peculiarities of the political, ideological, state-legal, socio-economic structure and development, the **continuity**, **heredity** and **internal** spiritual connection between them is obvious.

Резюме

О «НЕЗАВИСИМОСТИ» СОВЕТСКОЙ АРМЕНИИ 1920-1922 ГГ.

К 100-летию образования СССР

Арарат М. Акопян
Доктор ист. наук

Ключевые слова - Советская Армения, 1920 г., СССР, Ал. Мясникян, государственность, независимость, И. Сталин, Ковбюро, историография, республика, конституция, Совет народных комиссаров, партия, оценка, суверенитет.

Армянские историки и правоведы в разные периоды истории страны давали различные оценки государственно-правовому статусу Армянской

Социалистической Советской Республики (Ар ССР) 1920-1922 гг. Историки и правоведы советского периода, руководствуясь коммунистическим мировоззрением и марксистской методологией, в своих работах, как правило, отрицали факт существования у армян независимой государственности – Первой республики Армения. Они пытались представить как период реальной «независимости» и «свободы» не только факт существования Советской Армении в 1920-1922 гг., но и весь период, когда Армения была частью Закавказской Федерации и частью СССР. Конечно, по современным критериям исторической науки, эти рассуждения не соответствуют действительности. Утверждение советских авторов, что якобы только с «ноябрьской революцией» и советизацией в 1920 г. Армения и армянский народ обрели подлинную независимость, не соответствует действительности.

В отличие от советских авторов, постсоветская историография, а также историки армянской Диаспоры в своем подавляющем большинстве, руководствуясь принципом объективного изложения истории, справедливо считают, что с советизацией Армения, по сути, утратила свою самостоятельность и стала всего лишь составной частью Советской России (РССФР). Другая же группа исследователей считает, что до образования Закавказской Федерации и СССР, Армянская ССР была суверенным государством по ряду параметров (характеристик).

Рассматривая эти разные подходы в духе современных требований исторической науки, можно заметить, что факт существования независимой Первой республики Армения является бесспорным, а ее правопреемница, Советская Армения, несмотря на то, что в Ереванском соглашении от 2-го декабря провозглашалась независимой страной, с самого начала, включая 1920-1922 гг., по сути, не имела **независимости**. Но на протяжении существования советской власти Армения сохраняла свою **государственность**, которая после падения СССР, перешла к Третьей республике. Проводя исторические параллели между тремя армянскими республиками, вне зависимости от особенностей их политического, государственно-правового и социально-экономического устройства, можно констатировать факт **преемственности**, **наследственности** и внутренней **духовной** связи.

REFERENCES

1. “Dekreti sovetskoj vlasti”, t. 1, M., “Gosizdat”, 1957 **(In Russian)**.
2. “Genocid armjan: otvetstvennost‘ Turcii i objazatel‘stvo mirovogo soobsh’estva: Dokumenti i kommentarij”, sost. prof. **Barsegov Ju. G.**, t. 1, ch. 1, M., “Gardariki”, 2002 **(In Russian)**.
3. “Hayastani Hanrapetut‘yunĕ 1918-1920 t‘t‘. (K‘aghak‘akan patmut‘yun)”, p‘astat‘ght‘eri yev nyut‘eri zhoghovatsu, ghek.` **Vl. Ghazakhets‘yan**, Yer., “Gitut‘yun”, 2000 **(In Armenian)**.
4. “Hayastani Komunistakan kusakts‘ut‘yan patmut‘yan urvagtser”, Yer., “Hayastan” hrat., 1967 **(In Armenian)**.

Վէմ հայագիտական հանդես, ՀԴ Լ(Լ) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

5. “Hayastanum sovetakan ishkhanut‘yan amrapndman mi k‘ani harts‘er (1920-1922 t‘t‘.)”, Yer., YEPH hrat., 1987 **(In Armenian)**.
6. “Haykakan SSṚ Konstituts‘ia”, kazmogh` **A. Yesayan** yev urishner, Yer., Pethrat, 1949 **(In Armenian)**.
7. “Hayots‘ patmut‘yun”, hat. 4, g. 1, Yer., “Zangak-97” hrat., 2010 **(In Armenian)**.
8. “HSKHH dekretneri yev hramanneri zhoghovatsu”, prak 1, Ējmiatsin, Pethrat, 1921 **(In Armenian)**.
9. “HSKHH patgamavorakan khorhurdneri 1-in hamagumari ardzanagrut‘yun”, Yer., 1922 **(In Armenian)**.
10. “HSKHH patgamavorakan khorhurdneri 1-in hamagumari ardzanagrut‘yun”, Yer., 1923 **(In Armenian)**.
11. “HSKHH Sahmanadrut‘iwně (Himnakan vorenk‘)”, Yer., Petakan hrat., 1922 **(In Armenian)**.
12. “Istorija Gruzii”, t. 3, Tb., Tip. AN GSSR, 1968 **(In Russian)**.
13. “Istorija KPSS”, t. 4, kn. 1 (1921-1929 gg.), M., “Gosizdat”, 1970 **(In Russian)**.
14. “Istorija Rossii. XX vek (1894-1939)”, otv. red. **Zubov A.**, M., izdatel‘stvo “Astrel”, 2009 **(In Russian)**.
15. “Istorija SSSR”, vtoraja serija, gl. red. **Ponomarjev B. N.**, t. 7, M., “Nauka”, 1967 **(In Russian)**.
16. “Istorija Sovetskoj Konstitucii (v dokumentax) 1917-1956”, M., “Gosizdat”, 1957 **(In Russian)**.
17. “Istorija Sovetskoj konstitucii v dekretax i postanovlenijax sovetskogo pravitel‘stva 1917-1936”, sostavil **S. Studenkin**, M., “Gosizdat”, 1936 **(In Russian)**.
18. “Konstitucija Socialisticheskoj sovetskoj respubliki Gruzii”, Tb., “Gosizdat”, 1922 **(In Russian)**.
19. “Obrazovanije SSSR (sbornik dokumentov)”, M., “Gosizdat”, 1972 **(In Russian)**.
20. “Ocherki istorii kommunisticheskix organizacij Zakavkaz‘ja”, ch. 2 (1921-1937 gg.), Baku, Izd. CK KP Gruzii, 1971 **(In Russian)**.
21. “SMKK-n hamagumarneri, konferansneri yev Kentkomi plenumneri banadzeverum yev voroshumnerum”, hat. 3 (1922-1925), Yer., Pet. hrat., 1987 **(In Armenian)**.
22. “Velikaja oktjabr‘skaja socialisticheskaja revoljucija i pobeda sovetskoj vlasti v Armenii (sbornik dokumentov)”, pod red. **Mnacakanjan A.** i dr., Jer., Hajpethrat, 1957 **(In Russian)**.
23. **Akopjan A.**, Moskovskij i Karsskij dogovori v sud‘be armjanskogo naroda, Jer., “Gitutjun” hrat., 2021 **(In Russian)**.
24. **Artsruni V.**, Hay-tachkakan paterazmě, Hay spayut‘iwně, Shatakh, Yer., “Mughni” hrat., 2002 **(In Armenian)**.
25. **Begijan A.**, Razvitije sovetskoj gosudarstvennosti v Armenii, Jer., Izd. AN Armjanskoj SSR, 1968 **(In Russian)**.
26. **El‘chibekjan A.**, Ot revkomov k sovetam (sozdanije sovetov v Armenii), Jer., “Ajastan”, 1978 **(In Russian)**.
27. **Gharibjanyan G.**, Lenině yev Andrkovkasě, g. 3 (1917-1924), Yer., “Hayastan” hrat., 1975 **(In Armenian)**.
28. **Ghazakhets‘yan V.**, Ch‘ekayi gortsuneut‘yan aṛajin tarin Hayastanum, “Banber Hayastani arkhivneri”, Yer., 2011, N 1, **(In Armenian)**.
29. **Ghazakhets‘yan V.**, Hayastaně 1920-1940 t‘t‘., Yer., HH GAA Patmut‘yan institut, 2006 **(In Armenian)**.

30. **Hakobyan A.**, Haykakan harts‘ĕ Azgeri ligayum, “Drōshak”, Yer., 2001, N 4 (september), **(In Armenian)**.
31. **Hakobyan A.**, Hayots‘ patmut‘yun, Yer., “Tntesaget”, 2022 **(In Armenian)**.
32. **Hakobyan A.**, HY Dashnakts‘ut‘yun kusakts‘ut‘yunĕ lutsarelu Haykomkusi p‘ordzerĕ (1920-akan t‘vakanner), Yer., HH GAA patm. inst., 2020 **(In Armenian)**.
33. **Hakobyan A.**, Khorhrdayin Hayastanĕ Moskvayi yev Karsi paymanagrerum, Yer., HH GAA hrat., 2010 **(In Armenian)**.
34. **Hakobyan A.**, Mayis 28-i khorhurdĕ, “Yerkir”, Yer., 26 mayisi 2006 t‘. **(In Armenian)**.
35. **Hakobyan A.**, Miakusakts‘akan varch‘akargi dzevavorumĕ Khorhrdayin Hayastanum (1920-akan t‘vakanner), Yer., HH GAA patm. inst., 2016 **(In Armenian)**.
36. **Hakobyan A.**, Mtorumner ankakhut‘yan masin, “Yerkir”, Yer., 31 mayis-6 hunis 2002 t‘. **(In Armenian)**.
37. **Khach‘atryan H.**, Hayastani Hanrapetut‘yan aṛajin Sahmanadrut‘yunĕ, Yer., “Gitut‘yun”, 1997 **(In Armenian)**.
38. **Khach‘atryan H.**, Hayastani Hanrapetut‘yan aṛajin Sahmanadrut‘yunĕ, Yer., “Gitut‘yun”, 1997 **(In Armenian)**.
39. **Kulichenko M. I.**, Obrazovanije i razvitije Sojuza SSSR, Yer., Hajpethrat, 1982 **(In Russian)**.
40. **Lenin V.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 43, Yer., “Hayastan” hrat., 1982, hat. 45, Yer., “Hayastan” hrat., 1983 **(In Armenian)**.
41. **Melk‘onyan A.**, Hayots‘ patmut‘yan aknarkner, Yer., HH GAA patm. institut, 2018 **(In Armenian)**.
42. **Petrosyan Sh.**, Sovetakan petakanut‘yan kazmavorumĕ yev zargats‘umĕ Hayastanum, Yer., Haypethrat, 1961 **(In Armenian)**.
43. **Sahradyan S.**, Ṛazma-ṛevolyuts‘ion komitenerĕ Hayastanum (1917-1922), Yer., “Hayastan” hrat., 1961 **(In Armenian)**.
44. **Sarkisjan Je. K.**, Za kulisami, kak rozhdalsja Moskovskij dogovor 1921 g., “Literaturnaja Armenija”, Jer., 1991, N 1, **(In Russian)**.
45. **T‘umanyan H.**, Im Yerevan galu aṛtiv, “Yerkeri liakatar zhoghovatsu”, hat. 7, Yer., “Hayastan” hrat., 1995 **(In Armenian)**.
46. **Tasnapetean H.**, H.Y. Dashnakts‘ut‘iwnĕ ir kazmut‘enēn minch‘ev ZH Ĕndhanur zhoghov (1890-1924), At‘ēnk‘, H.Y.D. hrat., 1988 **(In Armenian)**.
47. **Virabyan A.**, Hayastanĕ Stalinits‘ minch‘ev Khrushch‘ov (1945-1957 t‘t‘.), Yer., HH GAA hrat., 2001 **(In Armenian)**.
48. **Xarmandarjan S.**, Lenin i stanovlenije Zakavkazskoj federacii 1921-1923, Jer., Hajpethrat, 1969 **(In Russian)**.
49. **Yesayan A.**, Hayastani mijazgayin-iravakan drut‘yunĕ 1920-1922 t‘t‘., Yer., YEPH hrat., 1967 **(In Armenian)**.